Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

2020թ. Բյուջեի վարչական մասում ,,Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում ՀՈԱԿ-ին գերեզմանների սպասարկման համար ընդհանուր բնույթի այլ ծառայություններով նախատեսված միջոցները անհրաժեշտ է նվազեցնել 18361.8 հազար դրամով և ուղղել սուբսիդիայի հատկացմանը՝ 9810.4 հազար դրամ, աղբահանության և սան մաքրման ծախսերին՝ 8551.4 հազար դրամ:

Քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի համար նախատեսված ծախսերը՝ 7000.0հազար դրամ սուբսիդիայի հոդվածից տեղափոխել այլ կոմունալ ծառայություններ հոդված:

Քաղաքապետարանում դեռատիզացիա և դեզինֆեկցիա կատարելու համար ,,Մասիսի կանխարգելիչ ախտահանում դուստր,, ՓԲԸ-ն դիմել է ծառայության տարեկան վճարը ավելացնելու խնդրանքով, նկատի ունենալով նյութերի գների բարձրացումը : Առաջարկվում է բյուջեում դեռատիազացիայի համար նախատեսված ծախսերը ավելացնել 100.0հազար դրամով:

Մասիսի թիվ 3 մանկապարտեզին անհրաժեշտ է հատկացնել 700.0հազար դրամ մանկական սեղաններ և աթոռներ ձեռք բերելու համար: Նկատի ունենալով, որ մանկապարտեզում առկա գույքը գտնվում է վատ վիճակում և նշված գումարով հնարավոր է թարմացնել 2 խմբասենյակի մանկական սեղաններն ու աթոռները, առաջարկվում է մանկապարտեզին հատկացնել 700.0 հազար դրամ լրացուցիչ սուբսիդիա:

,,Մասիսի Մշակույթի կենտրոն,, ՓԲԸ-ին անհրաժեշտ է հատկացնել 647.0հազար դրամ սուբսիդիա աշխատողների հունվար և փետրվար ամիսների աշխատավարձը վճարելու նպատակով:

Վարչական բյուջեում անհրաժեշտ լրացուցիչ ծախսերը կատարելու նպատակով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդը նվազեցնել 1447.0 հազար դրամով և ուղղել նշված ծախսերին:

2020թ. Բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է նախատեսել 800.0հազար դրամ Մասիս քաղաքի ավագ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ ձեռք բերելու համար: Առաջարկվում է այդ նպատակի համար անհրաժեշտ միջոցները հատկացնել ընդհանուր բնույթի այլ ծառայությունների վարչական սարքավորումներ հոդվածից:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան